

կիզմանի որդուց և թոռանց տիրած երկիրներուն, ուր որ ինքնին պտըտեցաւ և բնակեցաւ յառաջ քան զգալն և զկրելն նախատինք իր քաղաքակցաց, և հալածուած ու մոռցուած մեռնիլ իտալական բանտի մը մէջ: Իրմէ վերջը Ասիոյ կողմերը զացին և ծանուցին փրանկիսկեանն Օտերիկ Բորտենունացի (1344—1350), Մարկոս Գոռնարոյ Վենետիկեցի (1319), Բեկորեդի (1335), և Մարին Սանուդոյ (1325):

Արժանի է յիշատակութեան և Լեռնարուոյ Ֆիպոնաչի Բիզացի վաճառականն, որ գիւրացոյց գրահաշուի ուսումը, զոր կ'ըսուի թէ Ժէրապէր մտուց յԱրաբացոց առած, կամ ինքն հնարեց:

Փլաշիոս Ճիոյա Ամալֆիացի մտուց յիտալիա կողմացուցի գործածութիւնը իրը յամի 1300. ասոր վրայ Փրանկը կը հակառակին և իրենց կ'ընծայեն առաջնութիւնը: Մենք ալ չենք հակառակիր վառօդի գիւտին վրայօք, որ քիչ մը վերջը հնարեցաւ. բաւական պարծելու բան ունինք, և աւելորդ կը սեպեմք երկրայականաց վրայ ալ վիճին. անտարակոյս է որ Տանդէի դարն մեծ և արդասաւոր եղաւ արուեստական և գրաւորական գիւտովք, եթէ փոքր և գրեթէ ոչինչ էր քաղաքական մասամբ, ինչպէս որ կը խոստովանի ինքնին Տանդէ:

Կը շարունակոյ:

## ՀԱՅԻ ՊԱՏՌՈՒ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

### ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ԳՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ

(ՏԵՍ ԵՐԵՍ 17.)

Դասակարգութիւն կենդանեաց:

« Վտանգաւոր է յայտնապէս ցուցընել մարդուս թէ որչափ հաւասար է

անասնոց, առանց հաւաստելու անոր իր գերազանցութիւնը: Նմանապէս ալ վտանգաւոր է յայտնապէս ցուցընել իր գերազանցութիւնը՝ առանց նուաստութիւնը հաւաստելու: Բայց և այնպէս աւելի վտանգաւոր է երկուքին ծանօթութենէն ալ զինքը անգէտ բռնել: Շահաւետը և մեծապէս օգտակարը թէ մէկին և թէ միւսին նկատմամբ զինքը ծանօթացնելն է »: (Բագրալ. Խորհր. գլ. Դ):

Այդ տողերը գրողը, սիրելի օրիորդ, այնչափ փոյթ շունէր պղտի աղջկանց վրայ: Գաղղիական մատենագրութեան ամենէն վսեմ հանճարներէն մէկն է. մարդ մը որ գրեթէ տղայութիւն ունեցած չէ, որովհետեւ տասուերկու տարուան հասակի մէջ, ըստ որում որ կը պատմուի, երկրաշափութիւնը ինքնիրեն մինակ հնարելու ետեկ էր, եթէ հայրն զինքը աշխատութենէ ազատելու համար, ժամանակին չհասնէր ու զիրքը ձեռքը չտար. իսկ տասնըհինգ տարուան հասակին մէջ կոնական հատուցածոց վրայ անանկ ճառ մը գրեց, որ նոյն իսկ իր ժամանակակից զիտնոց մեծ զարմանք ազդեց: Ես որ քեզի հիմա կը խօսիմ, կոնական հատուածք ինչ ըսել է չեմ գիտեր. բայց անոր համար միայն կը զուրցեմ քեզի ատիկայ՝ որ հասկնաս թէ մեծապէս սուր միտք ունեցող մէկ մըն էր այդ մատենագիրը, և ես մեծապէս ուրախ եմ այնպիսի մէկի մը հեղինակութեանը ներքեւ պատսպարելու, հիմա՝ որ կը պատրաստուիմ ցուցընելու քեզի այն ստուգապէս ահաւոր նմանութիւն ներն որ կան ընդ կենդանին և ընդ քեզ: Քու գերազանցութիւնդ ցուցընելէն լաւագոյն բան չեմ փափաքիր: Եւ այդ գերազանցութիւնդ ոչ թէ այն մետաքսեայ հանդերձին վրայ է որ քեզի կը հագուեցնեն, կամ թէ մօրդ սենեկին բազմոցներուն վրայ, հապա այդ փոքր ողովն վրայ է, որ 'ի քեզ կը ոկսի ծագիլ, ինչպէս արել երկնից վրայ, երբ առաւոտեան մառախուզը կը ճեղքէ:

Այդ սկզբնաւորող մտաց վրայ կը կայանայ, որ ցարդ ներեց քեզի բոլոր պատմած գեղեցիկ պատմութիւններս հասկընալու . այդ նորաբոյս ու յստակ գիտակցութեանը վրայ կը կայանայ, որ երբ խելք ըլլաս քեզի ուրախակից է, և երբ անպատեհ վարք մ'ունենաս՝ քեզ կը յանդիմանէ . այն ամեն բաներն որ կենդանեաց տրուած չեն, կամ գոնէ ոչ նովին չափով ինչպէս քեզի, և որոնց միջոցաւ քան զանոնք կը գերազանցես, նոյն այն բաներով այնչափ աւելի քան զանոնք գերագոյն կ'ըլլաս՝ որչափ աւելի 'ի քեզ զարգացում առնուն : Քու նուաստութիւնդ, — այդու նկատմամբ կը խնդրեմ ներէ բապալ, բայց ես նուաստութիւն չեմ կոչեր զայդ, — քու կենդանեաց հետ ունեցած մերձաւորութիւնդ այն ձրից մէջ է՝ որոնց մով Աստուած զքեզ անոնց հետ հաւասարաբաժին ըրած է, քու կազմուածքիդ այն զարմանալեաց մէջ է՝ զորոնք ամբողջապէս և նաև ցյետինն 'ի կենդանիս գտնելու ենք . որմէն սորվիս պիտի, եթէ դեռ ևս մնքէդ չէ անցած, թէ ինչպէս դու նաև անոնք ալ մի և նոյն ձեռաց գործ են, և պէսք է կրտսեր եղբայր համարիլ զանոնք, որչափ ալ 'ի սկզբան քեզի խիստ երենայ այդ բանը :

Ի Գաղղիա կենդանեաց պաշտպանութեան ընկերութիւն մը հաստատուած է, որ ազնիւ և արգոյ գործ մըն է, թէ պէտ և ընկերադրեալք ծաղրաբանութեանց նիւթ եղած են: Եւ յիրաւի չարաբեր շաղակրատութիւն մըն է տեղ մը բարիք ընող մարդոց ըսել թէ ուրիշ տեղ մեծագոյն բարիք կընայ ըլլուիլ: Եղածն եղած է: Ամենայն ինչ կը ծառայէ յաճումն յառաջադիմութեան հասարակաց բարոյականին, և կարելի չէ կենդանւոյն դահիճը հարուածել առանց մի և նոյն հարուածով նաև մարդուս դահիճն ալ հարուածելու: Արդ ամենէն գեղեցիկ ճառաբանութիւնն որ մէկը կընայ յօրինել 'ի նպաստ անասունքը պաշտպանող իրաւանց, այս փոքր ճանապարհորդութիւն

է որ հիմա կենդանեաց դասակարգութեան մէջէն մէկտեղ պիտոր ընենք: Զձին առնունք իրը օրինակ, որ շատ աւելի ստէպ պաշտպանութեան պէտք ունեցող անասուններէն է: Տուր անոր այն հացին պատառը որու պատմութիւնը մեր վրայ խօսելով զուրցեցինք. շատ կ'ախորժի այդ հացէն, անոր համար ալ իրեն շատ աղաչելու պէտք չկայ: Եթէ անկէ ետև այդ պատառը կարենար պատմել քեզի իր տեսածները, կը տեսնէիր որ ամեննեին բան մը պակաս չկայ, հապա ճշդիւ մի և նոյն պատմութիւնն է: Նախ և առաջ զայն մանրելու ատամունք կան, և լեզու մըն ալ զնոյնը կըլլելու: Ապա հագագ մը՝ որ անկէ խոյս տալու համար կը ծածկուի, և որկոր մ'որ զինքն իր մէջ կ'ընդունի, ինչպէս 'ի քեզ. ստամոքս մը հանդերձ իր հոյզերովը, որ քուկիններուդ նման են, իր տկնօրի նման ձևովը և իր սորովը, միշտ անանկ ինչպէս 'ի քեզ. նրբաղի մը որուն մէջ լեզին քուկինիդ նման լերդէ մը կը բերուի. մամացարեր անօթք որ կաթնային մամաց մը կը ծծեն, քուկինիդ նման . անկէց անդին ալ ստուարաղի մը և միւս մասերն: Այսափս բաւական չէ: Նաև սիրտ մըն ալ կայ հանդերձ իր երկու փորդքներովը և իր կափարչաց կրկին շարժմամբը, անանկ մէկ սիրտ մը՝ որ մեր առասպելին պղտի աղջիկը վստահ կերպով կրնար՝ ինչպէս թէ իրն ըլլար՝ ճարտարապետաց ցուցընել. այսու տարբերութեամբ միայն որ քիչ մը աւելի մեծ է: Այդ սրտին մէջ նմանապէս երակային արիւն մը հասնելով կը լեցուի և կ'երթայ այն թոքոց մէջ չնշերակային կը փոխուի, ուր օղը հրաւիրուելով առագաստին երթեսեկ շարժմամբը, որ քուկինիդ նման աղէկ սպասաւոր մըն է, գահավիժաբար կը թափանցէ: Այդ թոքերն ալ նմանապէս ածխի վաճառանոց մըն են. անոնց մէջ ածխական թթուի և թթուածնի մի և նոյն փոխանակութիւր կը գործադրուի, որով յայտնի է թէ ձիուն վառարանը ինչպէս մերը անանկ կը վառի, և եթէ

Ներմաշափն անոր բերնին մէջ դնես, որովհետև քաղաքավարաբար բերան կոչեցինք, 37 և կէս աստիճան կը ցուցինք. տարբերութեանը վրայ խօսիլ չաժեր: Վերջապէս գնա անոր արիւնը քննէ. անոր մէջ մի և նոյն շիճուկը կը գտնես և մի և նոյն մակարդը, և նաև բոլոր այն ջրաքլորատից, փոսփատից, բնածխատից խումբը, որոնցմէն խորչեցանք, և նմանապէս քուկիններուդ նման գնտիկներ, որոնք մի և նոյն բաղադրութիւնն ունին, մի և նոյն կեանքը, կամ եթէ լաւագոյն կը համարիս մի և նոյն ազդեցութիւնը: Պէտք չունիմ քեզի ըսելու թէ իր բնաթեն ու բնասպիտակուցը 100 գրամի մէջ կը բովանդակեն:

Բնածուխ . . 63 գրամ.  
Զրածին . . 7 »

Որոշեալ հաշիւ մըն է այդ 'ի մարդոյ ցշաղգամ, անանկ որ, ինչպէս դու, այդ ազնուական կենդանին ալ, ըստ ըսելոյ Պիւֆոնի, ուրիշ բան չէ եթէ ոչ քիչ մը բնածուխ, քիչ մը ջուր և քիչ մը օդ, հանդերձ մասամբ մը աղային գոյացութիւններով, որ կենդանեաց մարմնոյն մէջ հողոյ մասը կը ներկայացնեն:

Ստոյգն ըսենք, որ եթէ չենք կրնար բոլորովին մեզի նման ըսել զձին, բայց գոնէ մեզի շատ նման է: Նոյն բանն է նաև բոլոր այն կենդանեաց նկատմամբ որ մարդ իրեն ծառայեցուցած է, որոնք և ընկերութեան պաշտպանութեանը իւրաւոնք մ'ունին, որովհետև ինչուան որոշեալ կէտ մը մարդկային ազգին կը վերաբերին: Շանը համար չեմ ըսեր, որ ըստ որում մարդուս բարեկամ, իր հարկը կը հատուցանէ հիմա:

Երբ այդ մարդուս և իր մերձաւորաց զբեթէ մի և նոյն գործարանաց կազմութիւնը կը մտածեմ, կը հարցընեմ ես ինձի թէ ինչ բան կրցեր է անցնիլ գիտնոյ մը զիմսէն, որուն անունը հոստեղս կ'ուզեմ լուել քեզի, որ մտածեր է իր բնական պատմութեան յատակագծին մէջ, զմարդ առանձին ազգա-

պետութիւնը մը շինել, մարդկային ազգ, որպէս զի մինչև իր ատենը ծանօթ եղող, հանքային, բուռական և կենդանական, երկք ազդապետութեանց ետևէն կցէ: Թէ բազքալ ունեցած ըլլար այդ մտածութիւնը, իր կանոնական հաւուրածոց ճառաբանութիւը լմնցընելէն ետևէն ներելի էր իրեն. որովհետև զեռ ևս խնդրոյն հմտանալու բան մը չունէր: Բայց բնապատում մը . քննիչ մը որ իր կեանքը կենդանեաց գործարանները քննելու անցուցեր է: Հաւանական է որ իր պատճառներն ունեցած ըլլայ. սակայն ստոյգ ալ է որ այդ պատճառներն իր քննութեանց յիշատակացը մէջ փնտուած չէ:

Ներէ, սիրելի դու, եթէ գքեզ մոռնալով երևակայութեան մը դէմ կքրեցայ որ քեզի ամեննեին չհայիր: Այդ բանը բնականապէս ինձի անանկ գործի մը կ'առաջնորդէ որ շատ գիւրին չէ. սակայն աղէկ ուշաղրութիւն ընելովդ ինձի օգնես պիտի: կենդանական ազդին դասակարգութեանը վրայ է խընդիրը:

Անհուն բազմութեամբ կենդանիք կան, զիտես, և եթէ կ'ուզենք քիչ մը աղէկ քննութիւններով ճանչնալ զանոնք, հարկ է կարգ մը դնել այն անթիւ բազմութեանը որ խառնիխուռն մեր քննութեանցը առջին կը ներկայանան: Առանց ատոր ոչ երբեք սկիզբը կրնանք զիտնալ, և ոչ վերջը:

Շատ կերպով կարելի է բազմութիւնը կարգ դնել. սակայն ոճը միշտ մի և նոյն է: Այս ոճը կը կայանայ այդ բազմութիւնը բազկացնող անհատները խումբ խումբ շարելու վրայ, այնպէս որ խումբին ամեն անհատից հասարակ եղած մասնաւորութեամբ մը մէկմէկէ որոշուին: Նախ մեծ խումբեր կը ձեացընեն, զորոնք յետոյ աւելի մանր խումբերու կը բաժնեն, և ասոնք ալ դարձեալ ուրիշ մանրագոյններու, մինչեւ որ բաւական համարին: Եւ ահա այս գործիս դասակարգութիւն անունը կուտան:

Առնենք օրինակի համար այն բազ-

մութիւնն որ կիրակի օրն 'ի Դիւկրի կը գտնուի . շուտ մը հիմա կը դասակարգեմ քեզի զայն : Նախ և առաջ կ'որոշեմ զմարդիկ մէկ կողմը և զկանայս միւս կողմը . և այսպէս նախ կանանց գասուն վրայ կը սկսինք զբաղիլ , որովհետեւ այն է որ քեզի աւելի հետաքրքրական ըլլալու է : Նախ կ'ուզեմ զատել կարգուած կանայք անոնցմէ որ կարգուած չեն : Կարգուած կանանց մէջէն խումբ մը կը ձևացնեմ անոնցմոլ որ մայր են և ուրիշ խումբ մըն ալ անոնցմով որ զաւակ չունին : Միւսերուն մէջը կ'ունենամ դեռ ևս չկարգուածներուն կամ աղջկանց խումբը և այրեաց խումբը :

Առնունք հիմա աղջկանց խումբը , կ'որոշեմ մեծերը պղտիկներէն : Պղտիկներուն մէջ կ'ամփոփեմ , եթէ հաճոյէ , թխագոյներն ու խարտեշագոյներն . և վերջապէս կը համնիմ իմ փոքր խարտեշագոյնիս , որուն զինուորական կարգն իմ դասակարգութեանս մէջ ահա այսէ . հատուած խարտեշագոյնից , լնկերուրիւն փոքրկանց , վաշտ օրիորդաց , գուշնդ ոչ ամուսնացեալ կանանց , բաժին կանանց : Էրիկ մարդոց բաժինն ալ նմանապէս մի ենոյն կերպով պիտոր դասակարգուի , և երկուքն ալ համախումբ՝ Դիւկրիի բանակը ձևացնելու են :

Այս շատ դժուարին բան մը չէ . սակայն կենդանիք դասակարգել բոլորովին տարբեր բան մըն է , և ըսեմ հիմա քեզի թէ ինչո՞ւ : Մենք դասակարգութեան մը պէտք ունինք զանոնք սորվելու համար . սակայն Աստուած զկենդանիս ստեղծելու համար այդպիսի դասակարգութեան մը պէտք չէ ունեցած : Զամենը մէկ հատիկ յատակագծի մը վրայ ստեղծած է , որուն չորսդին , եթէ այսպէս կրնամ միտքս բացատրել , տեսակէ տեսակ անհուն զանազանութիւններ առատացուցած է , առանց այդ այլ և այլ տեսակաց մէջ այն անայլայելի սահմաններն հաստատելու , որ մեզի կարեոր ըլլալու էին այսօրուան

օրս խստիւ զանոնք դասակարգելու համար :

Դաշնակը սորվիլ սկսար : Գուցէ քեզի ըսած ըլլան թէ երաժշտութեան մէջ առաջարկ ըսելով ինչ կը հասկըցուի . կերտող երաժշտին նախկին գաղափարն , ըսել կ'ուզեմ , որուն կը հետևի հատուածին մէկ ծայրէն մինչև միւս ծայրը , նոյն գաղափարին վրայ , ինչպէս թէ կտաւ մը ըլլար , հազար ու մէկ մտածութիւններ բանելով , որոնք մէկմէկու հետ կը խառնուին ու կը միանան : Արդ եթէ համարձակի մէկը բաղդատութիւն մը ընելու , գրեթէ այսպիսի կերպով է որ կրնանք ըմբռնել Աստուծոյ բռնած ճամբայն կենդանեաց ստեղծմանը մէջ : Հասիր ապա , և այն ստեղծականաց մէջէն քու գունդերդ ու վաշտերդ բաժնէ , ստեղծումը այդ բանը քեզի կը ներէ . սակայն քու դասակարգութեանցդ համար ոչ երբեք կը բաժնէ այն որ ինքն միութիւն կը համարի :

Կայ արդարեւ կերպ մը . և է անանկ վարիլ ինչպէս ես քիչ մը յառաջ ըրի 'ի Դիւկրի , այսինքն , առնուլ միայն մէկ յատկութիւն մը , ինչպէս ընական պատմութեան մէջ կ'ըսուի , և բոլոր այն անհատներն որ այդ յատկութիւնն ունին իրարու միացընել , խարտեշագոյնք , փոքրկունք , օրիորդք , ևայլն : Ինչպէս շուտ կ'ըլլայ այդ բանը : Սակայն ապա ինչ կը հանդիպի : Դու մէկ դասու մէջ կ'ինաս , քու երէց քոյրդուրիշ դասու մէջ , մայրդ ուրիշ դասու մէջ , և եղբայրդ ալ օտար բաժնի մը մէջ կը գտնուի , և ձեզնէ ամենէն հեռու : Այդ արուեստական դասակարգուրիւն կը կոչուի . այլ կը տեսնես մեկն որ բանի չգար :

Ամենէն բնական բանը , մի և նոյն ընտանեաց անհատքը մէկտեղ միացընելն է : Անոր համար ալ այն դասակարգութիւններն որ այսպէս կարդ մ'ունին բնական դասակարգուրիւնք կը կոչուին :

Այսպիսի տեսակ դասակարգութիւն մըն է որ ընտրած են կենդանական աղ-

զին համար : Բոլոր այն կենդանիք մէկ-  
տեղ առած են որ ոչ թէ մէկ յատկու-  
թիւն մը միայն կը ներկայացընեն , հա-  
պա յատկութեանց ամբողջութիւն մը ,  
որ առհասարակ ամենուն յատուկ են ,  
և ամենէն կարսորներն են , զորոնք և  
տիրող յատկութիւնք կը կոչեն , և ա-  
նով մեծ խումբեր շինած են . որոնք ա-  
պա հետ զհետէ կը ստորաբաժանին ,  
ըստ այն երկրորդական տարրերութեց ,  
որոնցմով մի և նոյն խումբին տեսակ-  
ները մէկմէկէ կը տարբերին : Այս կեր-  
պով բոլոր կենդանեաց տեսակները ,  
ընդարձակ ամբողջի մը կանոնաւոր բա-  
ժանմանց մէջ ամփոփած են , ուր մարդ-  
ինքինքը չկորանցներ , որովհետեւ թէ  
սկիզբ մը կայ և թէ վերջ , և ուր մի և  
նոյն ցեղի կենդանիք քովէ քով դա-  
սեալ կան : Եթէ այդ անհուն գասա-  
կարգութեան բոլոր բաժանմունքները  
միահազոյն առջեղ ներկայացնէի , քե-  
զի շատ երկայն պիտոր երենար , և գու-  
ցէ կիսով չափ զուարճացնէր դքեզ : Ա-  
նոր համար կամաց կամաց պիտոր քըն-  
նենք զանոնք , և պարզութեան համար ,  
իւրագանչիւր բաժնին նկատմամբ միայն  
այն յատկութեանց պիտոր կապուինք՝  
որ մեր 'ի մեզ ըրած քննութեանց հետ  
շաղկապեալ են , այսինքն մննդառու-  
թեան . անանկ որ ուր դառնաս ինք-  
զինքդ ծանօթ աշխարհի մէջ պիտոր  
գտնես :

Հարկ է մի անդամ ըսեմ քեզի , թէ  
այս ալ քերականութեան կը նսանի :  
կան մերթ ընդ մերթ , և հարկ էր թէ  
ըլլային , մէկ քանի բացառութիւնք , որ  
երկիւղածարար քերականութեան ինք-  
նահաճոյ օրինաց դէմ կը բողոքեն . սա-  
կայն լաւագոյն մը չըլլալով հարկ է գո-  
հանալ , և նաև չնորհակալ ըլլալ անոնց  
որ այդ իմաստուն դասակարգութիւնը  
մեզի ընծայեցին , որ և հանդերձ իր  
կարեոր պակսութիւններովը , գեռ ևս  
շատ ճարտար և օգտակար է : Ոչ ոք  
բռնադատեալ է անկարելին ընելու :  
Զես կրնար ըմբռնել , եթէ ուզէի մեկ-  
նել քեզի , թէ որչափ գիտութիւն , աշ-  
խատանք ու հանճար հարկ եղած է ,

այդ երկայն ցուցակը ձեացնելու , որ  
պղտի օրիորդաց համար քիչ մը ձանձ-  
րալի է , յիրաւի սակայն գիտնոց առ-  
ջին շատ աղնիւ , և գուցէ չափէն ալ  
աւելի գեղեցիկ . լմայնելու որ ըլլանք  
կ'ըսեմ քեզի թէ ինչու : Եւ որովհետեւ  
այն մարդոց որ մեծ ծառայութիւններ  
ըրած են ճշմարիտ պարգև մը որ կըր-  
նայ տրուիլ անուննին տղայոց սորվեցը-  
նելն է , քեզի մնաս բարով ըսելէս յա-  
ռաջ , կ'ուզեմ սորվեցընել , թէ որուն  
պարտական ենք այդ ցուցակը , որուն  
վրայ այսօր լուսութեամբ կ'անցնիմ :

Նախ այդ ցուցակը հաստատելու  
գործածուած դրութիւնը , այսինքն ըը-  
նական դասակարգութեանց դրութիւ-  
նը , յետին դարուս գիտնոյ մը պար-  
տական ենք , Պէոնառ տը Ժիւիէօ  
գաղղիացւոյն , որ զնոյնը բուսոց վրայ  
փորձեց , որ են մարմնոց ուրիշ խումբ  
մը զորոնք կարգի զնել դիւրին չէ , ինչ-  
պէս պիտոր տեսնես երբ բուսաբանու-  
թիւնը սորվիս : Զնոյնը կենդանեաց  
յարմարցնողը նմանապէս Գաղղիացի  
գիտուն մին է , և մեր հայրեննեաց փառ-  
քերէն մէկը : Իր գրուածքն ու գիւ-  
տերն՝ բոլորովին նոր միլում մը տուին  
բնութեան գիտութեանը : Այդ մէկը  
գէորգ Գիւվիէն է , որուն անդրին 'ի Մոն-  
պէյառ կրնաս տեսնել , եթէ երբեք անկ  
կէ անցնիս : Ստոյգն ըսելու համար ,  
ինքն Գիւվիէ անձամբ և մինակ այդ  
հսկայ գործն չէ ըրած , թէպէտ և պա-  
տիւն իրեն կ'երթայ ինքն ազդած և ա-  
ռաջնորդ եղած ըլլալուն պատճառաւ :  
Շատերն իրեն օգնեցին , սակայն իր օգ-  
նականներէն մէկ մը կայ , որ քան զա-  
մենը պարկեշտ և գործունեայ եղած է ,  
և անունը կ'ուզեմ ըսել քեզի , վասն  
զի ինքը միւսներուն պէս՝ որ քիչ շատ  
հոչակաւոր եղած են , իր վարձքը չէ  
առած :

Այդ մէկն իր հայրեննակից Լոռի-  
յեառն է , որ Գիւվիէի քննութեանց  
սեննեակը անցուցած է բոլոր իր կեան-  
քը , այն մեծ մարդուն հովանաւորու-  
թեանը ներքե անխոնջ աշխատելով , և  
առանց նախանձու մտածութեան ա-

նոր փառքովը զուարճանալով, զնոյնն իրեն յատուկ ըրած ըլլալուն համար, և ոչ անպատճառ, որովհետեւ ինքն ալ նոյն փառաց մէջ իր մասն ունէր : Եթէ դիւվիէ գոնէ տեղ մը իր այս խոնար համիտ բարեկամը յիշած ըլլար, քեզի խօսք չէի ըներ հիմա, սակայն չէ կըրցած ժամանակ մը գտնելով գոնէ անգամ մը նշանակել այդ ամենօրեայ վաստակակցին անծանօթ անունը . և այդ այնշափ աւելի գէշ բան մըն է՝ որչափ դիւվիէ այն սուտանուն մեծ մարդիկներէն չէր, որ իրենց փառացը վրայ անվտահ ըլլալով՝ զնոյնը ուրիշի հետ հաւասարաբաժին ընել չեն ուզեր : Անոր համար ես ալ 'ի պատուհաս անոր որոշեցի այդ անունը քեզի սորվեցնելու, քեզի որ դեռ ևս այնշափ քիշ բան դիտես : Կը փափաքիմ որ այդ պատուհասը կարենար քեզի դաս մը ըլլալ ժամանակաւ, թէ պէտք չէ անոնք ուրանաս որ պարծանք բերող գործի մը մէջ քեզի օգնական եղան : Այդ բանը միշտ դուրս կ'ելլէ :

Իր շարունակոյ:

## ՍԿԻԶԲՆ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ

(Տես Հատ. Իթ. Էրես 141.)

### ՎԵՑԵՐՈՐԴ ՕՐ

Յայսմ աւուր յիշատակ է վեցերորդ աւուր արարչութեանն Աստուծոյ : Յորում աւուր ասաց Աստուծած՝ հանել շունչս կենդանիս ամենայն երկրի : Փառք ամենազօր կամաց արարչին . որ 'ի նուաստագունիցն սկսեալ, 'ի մեծագոյնսն ել արարչութեամբ : Զբոյս և զտունկս արար յերկրի . և ապա զլուսաւորս յերկինս : Յետոյ զջրայինս և զօղայինս՝ և ապա զցամաքային կենդանիք՝ որ մեծ և պատուականանալով են քան զնոսա . վասն զի աւելի մասն կենաց ունին . և զգայութիւնս մտաւորս բանաւորաց : Բայց դիտելի է . զի նշան կենդանութեան է տուեալ յԱստուծոյ

'ի քարն մադնիտ որ է անդամանդն . և այն կենդանական նշանօքն բռնէ զերկաթն : Եւ ապա 'ի բոյսս և 'ի տունկս ետ Աստուծած զնշան կենդանութեան . և ապա 'ի կառաբրոյսս և 'ի խեցէմորթս՝ որք միով զգայութեամբ են, և թոք և փորոտիք կոչին երկրի . և ապա յաւելւածով 'ի մեծամեծ մարմինս և 'ի կարօղսն շրջել հեռագոյնս . և ապա ըստ կարգի ելանէ 'ի չորքոտանիսն, զորոց յերրորդում աւուր զդարմանս պիտոյ յիշն բուտոյց՝ և 'ի վեցերորդի աւուրս զվայելողսն զանասունս՝ որ խոտարուտք են . և ապա զդազանս զկերօղս անասունոցն : Եւ անասունք ասին վասն ք պատճառի ասին, նախ զի կարճունեայք են . և շատք՝ անուագ, որ 'ի վերայ լանջացն սողան որպէս օձն յետ անիծիցն . զի նախ օձն ոտնաւոր էր և թեւաւոր՝ և ապա 'ի պորտն սողալ էառ հրաման : Եւ ք պատճառ սողնոցն այն է՝ որ ձայնիւ սուղեն՝ այսինքն սղան : Որպէս և զազանք, վասն ք պատճառաց . նախ զի պատառողք են . և են ոմանք որ պատառածոցն գէկ ասեն . և ք, զի անձունիք են, կոպիտք և անհեթեթք : Որպէս ասեն զրոնոնոսն նման եղին որ զկուն ձգէ և զմարդն այրէ . և այլ զազան կայ՝ որ զմազն ձգէ և զորաորդն սպանանէ . որպէս ողնին որ զփուշն ձգէ : Գոն և այլ զազանք կարծրեղ ջիւրք և սուրք՝ որ զապառաժն տաշէ : Եւ քեզ վկայ խոզն վարազ . զի յընդելական իրաց հաստատեսցի և հաւատարիմ լիցի անսովոր խապարս : Եւ 'ի Հապաշաստան ասեն գոլ վիշապամարդք : և այծամարդք, ոտն այծու՝ և այլ հասակն ձիոյ : Եւ են որ ձեն ձիոյ է՝ և կերպարանն մարդոյ՝ և մի եղջիւր 'ի դլուխն ունին . և եղջիւրն նման է ցրոկոյ, այս ինքն իբրև զդունչ՝ զլսողն լի երկայնեալ 'ի ճակատն 'ի վեր : Են և այլ ահագնասեսիլ գազանք . յորոց և զոմանս ետես սուրբ հայր Անտոն 'ի գնալն առ Պօղոս : Եւ սալամանդր զա-